ԳԱՅԱՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ
Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի դոցենտ, կենսաբանական գիտությունների թեկնածու

ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ԱԳՐԵՍԻՎ ՎԱՐՔԱԳԾԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

Ագրեսիվ վարքի զարգացման հիմքերն առաջին հերթին տանում են դեպի ընտանիքը, այնտեղ իրականացվող դաստիարակչական գործընթացը, որտեղ սոցիալականացվում է անձը՝ կյանքի առաջին տարիներին և դրան հաջորդող շրջաններ: Ագրեսիայի զարգացման կարևոր պայմաններից է նաև սոցիալական միջավայրը:

Հանգուցային բառեր և արտահայտություններ. դաստիարակություն, դեռահաս, ագրեսիվ վարք, սոցիալական նորմեր ու կանոններ:

Դեռահասության շրջանում առաջ են գալիս որոշ խնդիրներ, որոնց շարքում կարևորներից է ֆրուստրացիայի երևույթը՝ ծնողական սիրո պակասը, չբավարարվածությունը կամ դրա բացակայությունը, մշտական պատիժների կիրառումը /մեկ կամ երկու ծնողի կողմից/: Գիտության մեջ նշվում են ագրեսիվ վարքը կանխարգելելու և արմատախիլ անելու երկու ճանապարհ.

– Ագրեսիվ պատժել
– Չխրախուսել

Մինչև երեխայի դեռահասության տարիքը հնարավոր է անտեսել ագրեսիվ վարքը, չխրախուսել և միևնույն ժամանակ խրախուսել /գովել/ այլ դրական գործողությունների համար, ինչը ժամանակի ընթացքում կթուլացնի ագրեսիվ վարքը /որպես առաջնային/: Դեռահասության ագրեսիայի անտեսումն անցանկալի է, քանի որ կարող է հաճախացնել ագրեսիվ վարքը և դարձնել այն սովորական: Քանի որ երեխան փոքր է և նրա շփման շրջանակը նույնպես փոքր է, ընտանիքում ընդունված որոշումների վրա չի ազդում տվյալ սոցիալական միջավայրը և ծնողի ագրեսիվ վարքի անտեսումը իրոք մնում է ուժի մեջ: Իսկ դեռահասի դեպքում, քանի որ շփման շրջանակը լայն է, դեռահասն իր խրախուսանքը կարող է ստանալ նաև դրսից, այսինքն հավանություն հասակակիցներից, ինչն այդ տարիքային շրջանում ավելի կարևոր է: Դեռահասները մշտապես փորձարկում են սոցիալական նորմերն ու կանոնները, ստուգում են դրանց ամրությունը և իրենց թույլատրելի վարքի սահմանը: Այդ պատճառով ծնողի կողմից նման վարքին չարձագանքելը կարող է դիտվել որպես թույլտվության և/կամ խրախուսանք: Ակտիվ պատժելու դեպքում ագրեսիան կարող է անցնել, բայց կարող է նաև դրսևորվել այլ իրավիճակներում, ուր պատժելու վտանգը փոքր է կամ ընդհանրապես չկա: Ըստ Գիլինսկու տեսության ագրեսիայի տեղափոխումն ուրիշ, ավելի թույլ օբյեկտի վրա ավելի անվտանգ է, սակայն այդ օբյեկտը կարող է չլինել իրական ագրեսիայի պատճառ: Ագրեսորի թիրախի ընտրությունը պայմանավորված է երեք գործոններով.

1. Ուղղակի ագրեսիայի դրդման ուժ
2. Նպաստող այլ գործոններ
3. Նմանություն իրական ագրեսիա ծնող օբյեկտի հետ

Մի շարք գիտնականներ տարանջատում են հետևյալ պատճառները.

1. Ագրեսիան որպես բնազդ՝ էվոլյուցիայի ընթացքում առաջացել է տեսակի պահպանման համար:

2. Ֆրուստրացիայից առաջացած ագրեսիա՝ ընկճվածություն, անհանգստություն, ինչն առաջացել է կարևոր պա-

հանջմունքի չբավարարվելուց:

3. Ագրեսիան որպես սովորություն՝ հաճախ կրկնվող անախորժություններից, անհանգստություններից, որոնք ուղղորդվում են բացասական հույզերով:

4. Ագրեսիան որպես ձեռք բերված հակում՝ դրսևորվում է զայրույթի մեջ [7,125-126]:

Ագրեսիվ վարքի առաջացմանը նպաստում է որևէ տեսակի բռնության (ֆիզիկական, հոգեբանական, սեռական) ենթարկվելը, ինչը ծնում է անօգնականության զգացում, նվաստացած լինելը, զայրույթ, աճող մենակության զգացում, կախվածությունը և այլն: Դեռահասի մոտ առաջանում է բացասական խթանին արձագանքման վերահսկման դժվարություններ /իմպուլսիվություն/: Ագրեսիվությունը առաջանում է նաև անզբաղ լինելուց, առօրյա հեռուստացույց նայելուց, ինչը խթանում է ագրեսիվ երևակայությունը:

Սովորաբար երեխաները ձգտում են նմանակել ուրիշ մարդկանց արարքները և հաճախ նմանակում են այն մարդկանց, որոնց հետ նրանք հաճախ շփվում են: Մի կողմից դա գիտակցական փորձ է պահել իրեն այնպես, ինչպես պահում են իրենց ուրիշները, մի կողմից էլ գիտակցված նմանակում է: Պետք է իմանալ, որ հազվադեպ է հնարավոր վերացնել անցանկալի ապրումների բացասական հետևանքները, վատ ընտանեկան իրավիճակները վերափոխել դեպի լավը: Անհրաժեշտ է նշել, որ երեխայի կողմից այս կամ այն մոդելի ընտրությունը ինչ-որ չափով որոշվում է այն արարքների օրինակներով, որոնք նա տեսնում է մեծահասակների մոտ: Ամենահասարակ մակարդակում դա դրսևորվում է նրանով, թե երեխաները ինչպես են ձեռք բերում այս կամ այն սովորությունը: Նրանք հեշտությամբ ընդօրինակում են ծնողների, ծանոթների, ուսուցիչների, իրենց կողմից կուռք դարձած եր•չի կամ դերասանի ժեստերը, քայլվածքը կամ խոսելու ձևերը: Շատ դեպքերում այդ նմանակներում դրսևորվում է երեխայի հար•անքը այն մարդկանց նկատմամբ, որոնցից նա 'կախված' է, և որոնց հետ նրան կապում են ջերմ և ընկերական հարաբերություններ:

Ծնողական վարվելաձևի մոդելի դերը կարևոր է ոչ միայն սովորությունների ձեռքբերման պրոցեսի համար: Նաև սթրեսի եղանակն է որոշվում՝ ելնելով ծնողների վարվելաձևի նեջ ծանոթ ստրատեգիաներից: Եթե ծնողները արձագանքում են ագրեսիվ դժվարություններին, ապա հավանական է, որ երեխաները իրենց կպահեն հենց այդպես: Եթե հայրը վատ տրամադրության ժամանակգոռում է, կռվում, ապա երեխան, հենվելով այդ օրինակի վրա, իրեն պահում է ճիշտ այդպես: Իսկ եթե մայրը ամեն անգամ լարված կամ հուզված ժամանակ գլխացավով պարկում է անկողնում, ապա երեխան ամեն անգամ դժվարությունների հաղթահարմանը մոտենում է դժվար:

Երեխային մանկությունից լավ ծանոթ և երկար ժամանակ նրա կողմից դիտվող ինտիմ հարաբերությունները հանդիսանում են ծնողների միջև ընտանեկան հարաբերությունները: Տղաների՝ աղջիկների նկատմամբ վերաբերմունքը պայմանավորված է մոր նկատմամբ հոր վերաբերմունքից [9, 57-59]:

Կարևոր է նշել, որ երխաները ծնողներից սովորում են որոշակի վարվելաձևեր՝ ոչ միայն յուրացնելով անմիջապես հաղորդված կանոնները (կան պատրաստի ռեցեպ-տներ), նաև շնորհիվ ծնողների փոխհարաբերությունների մեջ գոյություն ունեցող մոդելի զննմամբ(կան տիպարներ, օրինակներ): Հաճախ հնարավոր է , որ երբ ռեցեպտը և օրինակը համընկնում են, երեխան իրեն պահում է այմպես, ինչպես և ծնողները: Հաճախ ծնողները ասում են մի բան, բայց անում հակառակը: Ասում են, որ երեխան միշտ արդար լինի, չխափի, բայց իրենք՝ ծնողներն են իրար խափում, երեխայից պահանջում են զսպվածություն, բայց իրենք

հասարակ իսկ բանից բռնկվում են: Այսպիսի իրավիճակներում ներկայացվող պահանջների և ծնողների օրինակի միջև ընտրությունը կախված է տարբեր իրավիճակներից, գրեթե անխուսափելի է, որ երեխայի մոտ վիրավորանք և բողոք կառաջանան այն կանխման և հաթղահարման մեթոդների մշակման և կիրառման մասին:

Ագրեսիվ վարքի ձևավորմանը նպաստում են զանազան անբարենպաստ գործոններ, որոնք գոյություն ունեն շրջապատող միջավայրում: Անբարենպաստ գործոնները կարող են լինել ինչպես օբյեկտիվ, այնպես էլ՝ սուբյեկտիվ՝ անձնային: Այն օբյեկտիվ և անձնային անբարենպաստ գործոնները, որոնք նպաստում են անչափահասների սոցիալական դիրքորոշման առաջացմանն ու նեգատիվ զարգացմանը, առանձնացնում ենք.

ա) հիմնվելով անբարենպաստ ընտանիքների ուսումնասիրության արդյունքների վրա, դպրոցի ուսումնադաստիարակչական գործունեության թերությունների և բացթողումների վրա,

բ) հաշվի առնլով այն պատճառներն ու պայմանները, որոնք նպաստել են երեխաների մանկավարժական և սոցիալական բացթողումներին:

Օբյեկտիվ բացասական գործոններ կարող են լինել ընտանեկան, մանկավարժական նյութական, տնտեսական, հասարակական բնույթի և այլն:

Սուբյեկտիվ՝ անձնային անբարենպաստ գործոնները, որոնք նպաստում են հասարակական համակեցության նորմերի շեղմանը, հիմնականում հոգեբանական բնույթ ունեն, այսինքն, նրանց դրսևորումը պայմանավորված է անհատական հոգեբանության ձևավորմամբ և նեգատիվ հարաբերություններով:

Օբյեկտիվ անբարենպաստ գործոնները կարելի է բաժանել 2 հիմնական համակարգի.

I համակարգի մեջ ընդգրկված են այն գործոնները, որոնք անմիջականորեն նպաստում են երեխաների վարքի խաթարմանը,

II համակարգը բովանդակող գործոնները միջնորդավորված ձևով նպաստում են անձի բարոյական դեֆորմացիային:

Անչափահաս անձի օրինախախատ հանցագործ դառնալը տեղի է ունենում

I համակարգի անբարենպաստ գործոնների անմիջական ազդցության տակ: II համակարգի մեջ ընդգրկված գործոնները, եթե անմիջականորեն չեն ազդում անձի վրա, ապա նրանց միջնորդավորված դեգրատացնող ազդեցության ինտենսիվության աստիճանը նույնպես բարձր է, երբեմն նույնիսկ առաջինից բարձր: Անբարենպաստ օբյեկտիվ գործոնների այս երկրորդ համակարգը բաժանվում են մի քանի խմբերի:

I խումբն ընդգրկում է ընտանիքից եկող անբարենպաստ գործոնները: Այստեղ առանձնացնում ենք հետևյալ ենթախմբերը.

ա) անբարենպաստ հարաբերությունները ծնողների միջև՝ սառնություն, անտարբերություն, պաշտոնականություն, թշնամանք, արհամարհանք և այլն,)

բ) ծնողների և ընտանիքի մյուս չափահաս անդամների հասարակայնորեն մերժելի (անբարոյական, հակահասարակական) վարքագիծը,

գ) ծնողների և երեխաների վատ փոխհարաբերությունները, հնացած տրաֆարետային կամ այսպես կոչված ինտենսիվ մեթոդնրի և միջոցների օգտագործումը,

դ) ծնողների կողմից դպրոցի կամ մանկավարժի դերի թերագնահատումը կամ գերագնահատումը,

ե) ծնողի խորացված հակահասարակական էությունը և այլն:

II խումբն արտահայտում է դպրոցի ուսումնադաստիարակչական գործունեության մեջ նկատվող թերութիուններն ու բացթողումները, ինչպես նաև ընդգրկում է ընդհանուր բնույթի գործոններ.

ա) մանկավարժի ցածր մասնագիտա-

կան և անբարենպաստ անձնային բնույթը՝տակտի, մարդասիրության, երեխայի անձի նկատմամբ հարգ•անքի և սիրո բացակայությունը, դաժանությունը, օբյեկտիվության պակասը, անազնվությունը, կասկածամտությունը և այլն):

Երեխան իր դրսևորած վարքագծում հիմնականում արտացոլում է իր ընտանիքի բարոյականությունը: Ծնողները հաճախ չեն գիտակցում, որ իրենց նորմալ հարաբերությունները կարող են բացասաբար անդրադառնալ երեխաների վրա: Նրանց թվում է, որ երեխաների նկատմամբ ցուցաբերված լավ վերաբերմունքը բավական է և երեխան իրավունք չունի միջամտելու ծնողների փոխհարաբերություններին [9,58-60]:

Սակայն երեխան հիվանդագին է ընդունում ծնողների միջև եղած յուրքանչյուր վեճը, որն էլ նպաստում է նրանց վարքագծին:

Բոլորովին պարտադիր չէ, որ նման ընտանիքում մեծացած երեխան անպայման ընտրի օրինազանց վարքի ուղին: Բայց ակնհայտորեն նա կկրի ընտանիքի անբարենպաստության կնիքը, որը կարող է արտահայտվել հուզական և վարքագծային խաթարումներով և այլն: Նման երեխան կարող է լինել ոչ բարյացակամ, ագրեսիվ, չկամ, զուրկ գթասրտությունից, անտարբեր լինի մարդկանց նկատմամբ, չունենալ հասարակական ակտիվություն, ունենալ արտահայտված բարություն և այլն, որոնք կարտահայտվեն մարդ-մարդ, մարդ-հասարակություն հարաբերություններում: Ըստ ընտանիքում տիրող հոգեբանական մթնոլորտի հարաբերությունների դրսևորումների, ծնողների միջև, ծնողների և երեխաների միջև փոխհարաբերությունների, ծնողների սոցիալական դերի, դերային վարքագծի և այլնի, կարելի է առանձնացնել անբարենպաստ ընտանիքների մի շարք տիպեր [5; 64]:

Անդրադառնանք առավել արտահայտված տիպերի բնութագրմանը:

ա) Պայմանականորեն բարենպաստ կամ անբարենպաստ ընտանիքներ,

բ) պայմանականորեն ՝սառը՝ հարաբերություններով ընտանիքներ,

գ) կոնֆլիկտային և քրեածին հարաբերություններով ընտանիքներ,

դ) սոցիալապես ոչ լիարժեք ընտանիքներ:

Կարևորելով ընտանիքի դերը, չենք կարող չխոսել դաստիարակության ոճի կոպտության և ճիշտ ընտրության մասին: Այդ իսկ պատճառով էլ պետք է խուսափել դաստիարակության սխալ ոճերից, տեսակներից: Դրանք են.

- անկանոն դաստիարակություն, որի դեպքում երեխան հսկողության տակ չէ և նրան դաստիարակում է փողոցը՝ հիմնականում բացասական ներգործությամբ:
- Գերհովանավորչական տեսակ, երբ երեխաներին անընդհատ հետևում են. երեխան սահմանափակվում է, ենթարկվող և նույնիսկ հասուն տարիքում չի կարողանում դուրս գալ այդ վիճակից: Այս ոճը երեխաներին կարող է դարձնել նաև կամակոր և եսասեր կամ, ընդհակառակը, նրա մոտ ձևավորվում է սխալ թերգնահատում սեփական ուժերի նկատմամբ:
- Դաստիարակություն «Մոխրոտի» սկզբունքով երեխաներին համարելով ՝մեծահասակ հանձնարարում են ծանր, նրա ուժերից վեր աշխատանք:

Բացի դաստիարակութան սխալ ոճերից, տեսակներից, գոյություն ունի նաև դաստիարակության թերություններ: Դրանք են

- տարերային դաստիարակության գերիշխումը ընտանքիում: Այսինքն դաստիարակության ընթացքում չեն կիրառվում սկզբունքներ կամ էլ կիրառվում են ժամանակ առ ժամանակ,
- դաստիարակության ընթացքում վերբալ մեթոդնրի կիրառման նախընտրանք, դաստիարակություն քարոզների միջոցով,
- ծնողների հեղինակության արժեվորումը,

- հուզական մթնոլորտի բացակայություն,
- կենցաղային կուլտուրայի պակաս,
- «ազատ» դաստիարակություն, որը հաճախ վերածվում է անկանոն դաստիարակության,
- մանկավարժական և հոգեբանական գիտելիքների և հմտությունների պակաս,
- հաղորդակցման ոճի փոփոխական բնույթը, անկանոնությունը, որը պայմանավորված է սոցիալական ծանր պայմաններով, պատմական շրջանով և այլն:

Եվ հենց այս թերություններն ու բացթողումներն են մեծամասամբ հանգեցնում դեռահասի բարոյական դեֆորմացիային:

Անբարենպաստ գործոնների II խումբը ինչպես արդեն նշվեց, կապված է անարդյունավետ ուսուցման և դաստիարակության հետ և նպաստում է նգատիվ դիրքորոշման առաջացմանը ուսման և աշխատանքի նկատմամբ: Այդ գործոնները բացասաբար են ազդում աշակերտի վարքի, առաջադիմության և հասարակական ակտիվության վրա: Այդ գործոնների թվին են դասվում մանկավարժի ցածր մասնագիտական պատրաստվածությունը, մանկավարժական տակտի, աշակերտի նկատմամբ սիրո, հարգանքի բացակայությունը, անհատական և տարիքային առանձնահատկությունների չիմացությունը, օբյեկտիվության պակասը աշակերտների վարքի նկատմամբ, կասկածամտությունը, մտավոր ցածր կարողություններ ունեցող երեխաների նկատմամբ մանկավարժի նեգատիվ վերաբերմունքը, դպրոցի և ընտանքի համագործակցության բացակայությունը, ինչպես նաև սովորողների վարքի շեղմանը նպաստում են ուսման մեջ հետ մնալը, երկտարեցիությունը, ուսուցչի և աշակերտների լարված, վատ փոխհարաբերությունները Այսօր նաև բավականին սակավ ուշադրություն է հատկացվում դպրոցներում մանկավարժական կադրերի ընտրության հարցին: Ուսուցիչներից շատերը հստակ չեն պատկերացնում դաստիարակության հետ կապված դժվարությունները, դրանց մանկավարժական և սոցիալ-հոգեբանական բնույթը, չեն պատկերացնում«դժվար» երեխաների հետ տարվող մանկավարժական աշխատանքների առանձնահատկությունները, նրանք սահմանափակ գիտելիքներ ունեն երեխաների շեղվող վարքագծի ահազանգ հանդիացող հոգեբանական նորագոյացությունների մասին, հետևաբար ավելորդ է նաև խոսել ուսուցիչների կողմից դրանց նախա Սովորաբար, խոսելով ընտանեկան անբարենպաստ պայմանների մասին, որոնք բացասաբար են ազդում երեխայի վրա, թվում են բազմաթիվ պատճառներ՝ հատուկ ուշադրություն դարձնելով ոչ լրիվ, քայքայված ընտանիքի վրա: Ժխտելով այդպիսի ընտանիքի բացասական, հանցագ ործության մղող ազդեցությունը երեխայի վրա՝ պետք է ընդգ ծել, որ օրինազանցություններ կատարած երեխաների 2/3-ը դաստիարակվել է ձևական տեսակետից ամբողջական ընտանիքներում, որոնք ունեին նյութական և բնականարային նորմալ պայմաններ: Սա ցույց է տալիս, որ վճռական նշանակություն ունեն ոչ թե ընտանիքի դիրքն ու կազմը, այլ նրանում տիրող բարոյական մթնոլորտը, այսինքն՝ այն փոխհարաբերությունները, որոնք հաստատվում են ընտա-նիքի անդամների, ինչպես նաև չափահասների և շրջապատողների միջև: Հենց ներընտանեկան անբարենպաստ փոխհարաբերությունները, ծնողների բացասական օրինակը, կոլեկտիվի նկատմամբ արհամարանքը, մասնավոր-սեփականատիրական հոգեբանությունը, մարդականց նկատմամբ անտարբերությունը, երկերեսանիությունը, կոպտությունը, անազնվությունը, հարբեցողությունը և նման այլ դրսևորումներն են ստեղծում այն անբարենպաստ միկրոմիջավայրը, որը դևիանտ վարքագծի ձևավորման

գլխավոր պատճառներից մեկն է: Այնպիսի ընտանիքների թիվը, որոնցում երեխաներին չեն ցանկանում դաստիարակել սոցիալական հասարակական պահանջներին համապատասխան և գիտակցորեն հակահասարակական հայացքներ եր կիրառում, համեմատաբար շատ են: Ընտանիքում հաճախ չեն կարողանում (հիմնականում չգիտակցելով այդ փաստը) ճիշտ դաստիարակել երեխաներին ցածր մակարդակի և մի շարք այլ պատճառներով, որոնցից որոշակի դեր են խաղում ծնողների զբաղվածությունը, հիվանդությունը և այլն: Լուրջ անհանգստության տեղիք են տալիս նաև արտաքնապես բարեկեցիկ այն ընտանիքները, որտեղ ծնողներն անտարբեր են երեխայի ներաշխարհի նկատմամբ: Սա երեխայի ինքնասիրության ու պատվի ոտնահարման յուրահատուկ ձև կարելի է համարել: Բայց ընտանեկան դաստիարակության թերությունները որոշակի միտումներ են ստեղծում, որոնց շտկման ու վերացման խնդիրը պետք է լուծի պետական այնպիսի կազմակերպություն, ինչպիսին դպրոցն է: Ցավոք այդ թերությունները հաճախ էլ ավելի են խորացվում դպրոցներում առկա մի շարք մանկավարժական ձևամոլության պատճառով [6,58-65]:

Երբ երեխան դուրս է մնում նորմալ, այսինքն այնպիսի հարաբերությունների ոլոր-տից, որտեղ նա գիտակցում է իր հնարավորությունները, նշանակությունն ու հասա-րակության համար իր օգտակարությունը, սկսում է հակադրվել կոլեկտիվին, հասարակությանը, նրա անդամների ակտիվությանը և առանձնապես այն հիմնական գործունեությանը, որն օ•տակար է հասարակության համար:

Վաղուց հայտնի է, որ էմոցիոնալ խանգարումների ի հայտգալը, վարքի խանգարումները և մի շարք հոգեբանական պրոբլեմներ պայմանավորված են երեխայի մանկության ընթացքում որոշ իրադարձություններով: Ընտանեկան կոնֆլիկտները, սիրո պակասը, ծնողներից մեկի մահը, ծնողների խստությունը կամ անհետևողական պատիժները աստիճանաբար ազդում են երեխայի հոգեկանի վրա: Այդպիսի երեխաներին իրական, արդյունավետ օգնություն ցույց տալու համար բավական չէ սահմանափակվել ախտորոշմամբ, կոնկրետ իրադարձությունների գիտելիքներով՝ կապված հոգեկան պրոբլեմների առաջացման հետ: Անհրաժեշտ է իմանալ, թե դրանք ինչու և ինչպես են բերում անցանկալի հետևանքների: Այլ կերպ ասած՝ անհրաժեշտ է ունենալ ճիշտ պատկերացում առաջացած խանգարումների հոգեբանական մեխանիզմների մասին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ս. Զ. Արզումանյան, Է. Գրին, Իրավաբանական հոգեբանություն, Երևան, 1991 թ.:
2. Ս. Զ. Արզումանյան, Դեռահասների խաթարվող սոցիալական վարքագծի հոգեբանամանկավարժական մեխանիզմները, Երևան, 1991 թ.:
3. Ս. Զ. Արզումանյան, Դեռահասների վարքագծի խաթարումների հոգեբանամանկավարժական պատճառները և դրանց հաղթահարման ուղիները, Երևան, 1991 թ.:
4. Ա. Վ. Պետրովսկի, Տարիքային և մանկավարժական հոգեբանություն, Երևան, 1991 թ.:
5. Гаспарян Ю. А. Институт семьи: Проблемы обновления, развития.СПБ, 1997.
6. Гаспарян Ю. А. Семья на пороге XXI века. Социологические проблемы. СПб., 1999 .
7. Гилинский Я. И. ''Отклоняющееся поведение'' как социальное явление / Человек и общество. Вып. VII, Л., 1971. - С. 116 -156, 163.
8. Гилинский Я. И. Социология девиантного поведения как специальная социологическая теория / Социологические исследования. М., 1991, № 4. - С. 72-78.
9. Горьковая Н. А. Влияние семьи на формирование делинквентности у подростков / Психологический журнал. М., 1994, № 2. – С. 57-65.
10. Грэхем П. Проблема сохранения значения павловского подхода. М., 1975.

ФАКТОРЫ ПРОЯВЛЕНИЯ АГРЕССИВНОГО ПОВЕДЕНИЯ У ПОДРОСТКОВ

ГАЯНЕ ГРИГОРЯН

Доцент Армянского государственного педагогического университета имени Хачатура Абовяна, кандидат биологических наук

Причины развития агрессивного поведения детей кроются, в первую очередь, в семье, те есть там, где они получают воспитание, где человек социализируется в первые годы своей жизни и в последующие периоды. Социальная среда также является одним из важных условий развития агрессии.

FACTORC OF AGGRESSIVE BEHAVIOUR OF ADOLESCENTS

GAYANE GRIGORYAN

PhD in Biology, Associate professor at Khachatur Abovian Armenian State Pedagogical University

The basis for the development of aggressive behavior is first of all led to the family, where upbringing of the child is carried out. The author points out that the social environment is also an important condition for the development of aggression, but most of all, parents and the wat they treat the child in the family is being investigated in the article. The research takes into consideration that many factors, such as lack of parental love and care, dissatisfaction and permanent punishment which result the adolescents aggressive behaviour.